Ծուշանիկ Կուրղինյան

Ձկնորսուհին

Ահա լուսնկան մտավ առագաստ,
Եվ ծածկվեց ամպե թավիշ վերմակով .
Մոտեցիր զգույշ, համբուրիր զգաստ՝
Մի շող երերաց ամպերի տակով:

Լուսնկան սաստիկ սիրում է նայել,
Խորը թափանցել ամեն մի գաղտնիք .
Նա երբեք առատ լույս չէ խնայել՝
Տեսնելու մարդկանց համբույրը-կնիք:

Մոտեցիր զգույշ, համբուրիր կամաց,
Վայելքիս համար չուզեմ ափսոսալ . . .
Լուսնկան կանգնեց աստղերի դիմաց,
Սկսեց նրանց ինչ-որ փսփսալ:

Տե՛ս, մի նենգ աստղիկ լողում է լճում,
Ալիքներն անգութ ծաղրող դեմք ունին:
Հույսն է վերևից ափի հետ վիճում
Նայում է դժգոհ լալկան ուռենին:

Գուցե նա այսօր այստեղ գա որսի,
Ալիքն էլ երբեք չի պահել գաղտնիք . . .
Այստեղ ամեն ինչ ճորտ է ձկնորսի,

Նրան համախոհ՝ ջուր, աստղ ու երկինք:

1908 թ . 18 հոկտեմբերի